Ք. Երևան 24-ը օգոստոսի 2021թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 21-22-02

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԷԹԻԿԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԻՍՏԻ

«Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիա» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ ՀՖՖ) Կարգապահական և Էթիկայի կոմիտեի նիստը (այսուհետ՝ նիստ) կայացավ 2021թ. օգոստոսի 24-ին, ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27 հասցեում:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե).
Նիստին մասնակցում էին՝
Կարեն Հովհաննիսյան – Կոմիտեի նախագահ՝
Բաբկեն Ղալոյան- Կոմիտեի անդամ
Վահան Բերակչյան- Կոմիտեի անդամ
Արման Ալաբերքյան- Կոմիտեի անդամ
Տիգրան Իսրաելյան- Կոմիտեի անդամ
Հայկուհի Ռշտունի- Կոմիտեի անդամ, Կոմիտեի քարտուղար

Կոմիտեի նիստն անցկացնելու համար պահանջվող քվորումն ապահովված էր:
Կոմիտեի նախագահը ներկայացրեց Կոմիտեի նիստի օրակարգում ընդգրկված՝ ներքոնշյալ հարցերը, նիստն արձանագրում էր Կոմիտեի անդամ/քարտուղար Հ. Ռշտունին:

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՐՑ 1

13/08/21թ. «ԲԿՄԱ»-«Նոա» (ՊԼ014) խաղի մասին.

Համաձայն հետխաղային զեկույցի՝ ԲԿՄԱ թիմի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանը հայտավորված էր խաղի համար՝ իրավունք չուներ գտնվել մարզադաշտի տարածքում, քանի որ ինքնամեկուսացված էր: Սակայն նա, խախտելով հակահամաճարակային կանոնները և ինքնամեկուսացումը, խաղի առաջին իսկ րոպեից գտնվում էր մարզադաշտի տարածքում: Խաղասկզբին նա փորձում էր տալ հրահանգներ իր խաղացողներին: Անտեսելով մրցավարի հրահանգը, որ պետք է հեռանա՝ նա չհեռացավ մարզադաշտից, ընդամենը հեռացավ 5-10 մետր: Այս միջադեպի պատճառով խաղը կանգնեցվեց 3 րոպեով: Այնուհետև մարզադաշտի անվտանգության աշխատակիցը Ռ. Նազարյանին պարտադրեց անցնել խաղադաշտին հարող տարածքի ցանկապատից այն կողմ:

Անվտանգության աշխատակիցը չներկայացավ նախախաղային խորհրդակցությանը:

<u>ՈՐՈՇՈՒՄ 1</u>

Կոմիտեն ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով , 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով ՝ 5 կողմ և 1 դեմ ձայներով որոշեց՝

1.1. ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից կարգապահական վարույթի ընթացքում ուսումնասիրման առարկա չեն կարող հանդիսանալ ֆուտբոլային սուբյեկտների կորոնավիրուսով հիվանդ լինելու և ինքնամեկուսացման պահանջները խախտելու հետ կապված հարցերը և այդ հարցերին իրավական գնահատական տալը դուրս է կոմիտեի իրավասություններից: Սակայն, հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ Կոմիտեն որոշեց դիմել ՀՖՖ գլխավոր քարտուղարին ձեռնարկելու միջոցներ՝ հետխաղային արձանագրության մեջ ներառված փաստերի, ինչպես նաև COVID-19–ով պայմանավորված հակահամաճարակային կանոնների ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար:

1.2. Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի գլխավոր մարզիչ Ռաֆայել Նազարյանի կողմից կարգապահական խախտում կատարելու հանգամանքը և ղեկավարվելով ՀՖՖ Կարագապահական և էթիկայի կանոնակարգի 5-րդ հոդվածի 5.02 կետով Ռաֆայել Նազարյանին 2 խաղով զրկել ծառայողական պարտականությունների կատարելու իրավունքից:

1.3. Հաստատված համարել «ԲԿՄԱ» թիմի կողմից ՀՖՖ Կարագապահական և էթիկայի կանոնակարգի 40-րդ հոդվածի 40-րդ կետով կարգապահական խախտում կատարելու հանգամանքը և «ԲԿՄԱ» թիմին հայտարարել նկատողություն:

ՀԱՐՑ 2

2. 13/08/21թ. «ԲԿՄԱ»-«Նոա» (ՊԼ014) խաղի մասին.
Տոմսային համակարգը բացակայում էր:

<u>ՈՐՈՇՈՒՄ 2</u>

Կոմիտեն ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 28-րդ հոդվածի 28.01 կետով և 40-րդ հոդվածի 74-րդ կետով ՝ 6 կողմ և 0 դեմ ձայներով որոշեց՝

«ԲԿՄԱ» թիմին հայտարարել նկատողություն:
Նկատողություն է համարվում Կարգապահական և էթիկայի կողմիտեի կողմից ընդունված և հրապարակված որոշումը՝ իր պարտականությունների, իր կողմից կարգապահական խախտում թույլ տալու վերաբերյալ, որի չկատարումը հետագայում հանգեցնելու է ավելի խիստ պատժամիջոցների կիրառման:

ՀԱՐՑ 3

13/08/21թ. «ԲԿՄԱ»-«Նոա» (ՊԼ014) խաղի մասին.

Համաձայն հետխաղային արձանագրության Նոա ՖԱ-ի ֆուտբոլիստ Ջեֆֆերսոն դե Օլիվեիրան խաղի ընդմիջման ժամանակ իր երեխային ընդունեց տրիբունայից և նստեցրեց իր հետ պահեստայինների նստարանին:

ՈՐՈՇՈՒՄ 3

Կոմիտեն ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 3-րդ հոդվածով, 4-րդ հոդվածի 4.01, 4.02 կետերով, 5-րդ հոդվածի 5.01 կետով, 20-րդ հոդվածով, 21-րդ հոդվածի 21.04 կետով, 23-րդ հոդվածի 23.01 կետով՝ 6 կողմ 0 դեմ ձայներով որոշեց՝

1. Հաստատված համարել «Նոա» ՖԱ ֆուտբոլիստ Ջեֆֆերսոն դե Օլիվեիրայի կողմից կարգապահական խախտում կատարելու հանգամանքը և ղեկավարվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի 4-րդ հոդվածի 4.05 կետով նշանակել սահմանվածից նվազ պատժամիջոց՝ նկատողություն:
2. *Նկատողություն է համարվում Կարգապահական և էթիկայի կոմիտեի կողմից ընդունված և հրապարակված որոշումը՝ իր պարտականությունների, իր կողմից կարգապահական խախտում թույլ տալու վերաբերյալ, որի չկատարումը հետագայում հանգեցնելու է ավելի խիստ պատժամիջոցների կիրառման:*

Նախագահ՝ Կարեն Հովհաննիսյան

Անդամ և քարտուղար՝ Հայկուհի Ռշտունի

Անդամներ՝ Բաբկեն Ղալոյան

Արման Ալաբերքյան

Վահան Բերակչյան

Տիգրան Իսրաելյան

<u>Հիշեցում՝</u>

1. Հոդված 19. Կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկումը

   Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշումները ֆուտբոլային սուբյեկտների կողմից կարող են բողոքարկվել ՀՖՖ Բողոքարկման կոմիտե՝ որոշման մասին պաշտոնական հրապարակման պահից 7 (յոթ) օրվա ընթացքում, իսկ այդ դեպքում, երբ ֆուտբոլային սուբյեկտը դիմել է գործի հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 7-օրյա ժամկետը սկսում է հոսել այդ հիմքերը ստանալու պահից:

2. Հոդված 28. Պատասխանատվության միջոցի կիրառման ընդհանուր սկզբունքները

   28.05 Սույն կանոնակարգում ներառված՝ ֆուտբոլիստի և/կամ թիմի անձնակազմի անդամի ստացած դեղին քարտերի հետ կապված որակազրկումները (սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերը) կիրառվում են առանց ՀՖՖ Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:

3. Հոդված 25. Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի և ակումբի պաշտոնյաների պատասխանատվությունը

   25.20 Ֆուտբոլիստների, թիմի անձնակազմի, ակումբի պաշտոնյայի սույն կանոնակարգի 41- րդ, 45-րդ, 47-րդ և 49-րդ հոդվածների 1-ից 13-րդ կետերով սահմանված խախտումների հաշվառումը կատարում է համապատասխան ակումբը՝ առանց ՀՖՖ-ի Կարգապահական և Էթիկայի կոմիտեի որոշման:
   25.21 25.20 կետի պահանջները ակումբի կողմից չպահպանելը հանգեցնում է այդ ակումբի նկատմամբ կարգապահական պատժամիջոցի՝ տեխնիկական պարտություն:

4. Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցների տուգանքները սահմանված են ՀՀ Մ-18-16 առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների համար: Մ-15 և ցածր տարիքային խմբերի առաջնություններին մասնակցող ֆուտբոլիստների տուգանքները և պատժամիջոցները սահմանված են նախորդի 50%-ի չափով: Հոդված 44-ի և 45-ի կիրառվող պատժամիջոցները սահմանվում են նաև ՀՀ Սիրողական ֆուտբոլի առաջնություններին մասնակցող սուբյեկտների համար: